Հաստատված է

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական

մանկավարժական համալսարանի գիտական

խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 4 նիստում

Գիտական խորհրդի նախագահ՝

Ռեկտոր՝ Ռուբեն Միրզախանյան

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

2013-2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՊՄՀ ուսումնամասնագիտական պրակտիկայի կազմակերպման ժամանակակից հրամայականները և առկա միտումները բարձրագույն կրթության բարեփոխումների համատեքստում 2

1.1 Պրակտիկայի կազմակերպման ներկա իրավիճակի նկարագիրը 2

1.2 Պրակտիկայի կազմակերպման արդի հրամայականները 5

2. Պրակտիկայի կազմակերպման ռազմավարության հայեցակարգը և գործիքակազմը 7

3. Ուսանողների մասնագիտական պրակտիկայի առաքելությունը և նպատակները 12

4. Ուսումնամասնագիտական պրակտիկայի կազմակերպման ռազմավարության գործողությունների ծրագիրը և ժամանակացույցը 14

1. ՀՊՄՀ ուսումնամասնագիտական պրակտիկայի կազմակերպման ժամանակակից հրամայականները և առկա միտումները բարձրագույն կրթության բարեփոխումների համատեքստում

1.1 Պրակտիկայի կազմակերպման ներկա իրավիճակի նկարագիրը

ՀՊՄՀ-ում ուսումնամասնագիտական պրակտիկան.

- կազմակերպվում է 10 ֆակուլտետում բոլոր մասնագիտական կրթական ծրագրերով:
- ժամկետները հիմնականում նույնն են բոլոր ֆակուլտետներում.
- **ՀՊՄՀ –ում պրակտիկաները կազմակերպվում են.**
- Երևանի ն/դ կրթական հաստատություններում,
- 3 մանկատներում,
- շուրջ 50 հանրակրթական դպրոցներում,
- 8 հատուկ դպրոցներում,
- « Տարոն » գեղագիտական կենտրոնում,
- հասարակական կազմակերպություններում («Օրրան» ՀԿ, «Հույսի կամուրջ» ՀԿ, ՀՕՖ, Երեխաների զարգացման միջազգային կենտրոն և այլն), սոցիալական հոգածության կենտրոնում, ՍՕՍ գյուղերում և այլն
- Երևանի մի շարք առաջատար քլեջներում և արհեստագործական ուսումնարաններում,
- ՀՊՄՀ-ի հենակետային ավագ դպրոց-վարժարանում և հիմնական դպրոցում,
- Կրթության ազգային ինստիտուտում, Որակի ապահովման ազգային կենտրոնում
- ՀՊՄՀ-ի բակալավրիատում:

Մշակվել և ներդրվել է Շարունակական զարգացող մանկավարժական պրակտիկայի ծրագրի մոդել՝ Բլումի աստիճանակարգի և կոմպետենտային մոտեցման հիման վրա.

Հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել են պրակտիկայի դասընթացների նկարագրեր՝ վերոհիշյալ շարունակական պրակտիկայի մոդելով.

Խորհրդատու՝ Վեսա-Մատի Սարենիուս, Օուլուի համալսարանի միջազգային փորձագետ

Կատարված աշխատանքների ամփոփման արդյունքում մշակվել է ***ՀՊՄՀ ուսանողների մանկավարժական պրակտիկայի թղթապանակի կիրառման ընթացակարգի նախագիծ*** .

Նախագծի քննարկմանը մասնակցել են ֆակուլտետների դեկաններ և պրակտիկայի ղեկավարներ, ամբիոնների վարիչներ, համապատասխան և շահագրգիռ վարչությունների ու բաժինների պետեր:

Բակալավրիական կրթական ծրագրում մանկավարժական պրակտիկայի ժամկետները և կրեդիտները. նախկինում գործող ուս. պլաններով՝

- 4-րդ կիսամյակ՝ 3 կրեդիտ,
- 5-րդ կիսամյակ՝ 3 կրեդիտ,

(մեկ տարի տևողությամբ, յուրաքանչյուր շաբաթվա մեկ օրը՝ 6 ժամ)

- 6-րդ կիսամյակ՝ 6 կրեդիտ,
- 7-րդ կիսամյակ՝6 կրեդիտ

Ընդամենը՝ 18 կրեդիտ:

Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել իրականացնել պրակտիկայի շրջափուլերի տարանջատում՝ գիտական հիմնավորմամբ, յուրաքանչյուր շրջափուլի բովանդակության և սկզբունքների հստակեցում.

Բակալավրիական կրթական ծրագրում.

- Ուսումնաճանաչողական,
- Կիրառական,
- ամփոփիչ-գնահատող:

Մագիստրոսական կրթական ծրագրում.

- մանկավարժական-դասախոսական կամ մանկավարժահետազոտական,
- հետազոտական:

Յուրքանչյուր շրջափուլում, ուսանողների կարիքների ուսումնասիրության և վերլուծության հիման վրա առաջարկվել է տրամադրել 6 կրեդետ;

Մագիստրոսի կրթական ծրագրով գիտամանկավարժական պրակտիկաներին նախատեսվել է հատկացնել յուրաքանչյուր շրջափուլում 3 կրեդիտ:

Մագիստրոսական կրթական ծրագրում պրակտիկան նախատեսվում է ուսումնառության ողջ ժամանակահատվածում՝ բոլոր կիսամյակներում:

Անհրաժեշտություն է առաջացել զարգացնել բակալավրի պրակտիկայի կազմակերպման կառուցակարգերը, ինչպես նաև ընդլայնել մագիստրատուրայում կազմակերպվող պրակտիկաների հետազոտական բաղադրիչը:

Անհրաժեշտ է նաև էապես ընդլայնել ՏՀՏ-երի կիրառումը մասնագիտական պրակտիկայի ընթացքում, վերանայել նախկին նորմատիվ փաստաթղթերը, զարգացնել պրակտիկայի ռեֆլեքսիվ բաղադրիչը և ակտիվ դասավանդման գործընթացում ուսանողներին ներգրավելու ժամաքանակը և բովանդակությունը:

1.2 Պրակտիկայի կազմակերպման արդի հրամայականները

ՀՀ մասնագիտական կրթության զարգացմանը խոչընդոտող խնդիրներից է մնում աշխատաշուկայի և մասնագիտական կրթության միջև թույլ կապը: Պատրաստ չլինելով ներկայացնելու անհրաժեշտ կոմպետենցիաների պահանջարկ՝ տեղական աշխատաշուկան որպես տնտեսական առաջատար և կրթական գործընթացի ակտիվ շահակից հանդես գալու բավարար կարողունակություն չի դրսևորում:

Հետևաբար լրջագույնս կարևորվում է մասնագիտական շուկայի հետ կապի ամրապնդումը, որը պետք է միտված լինի առաջին հերթին դպրոցների, ուսումնական հաստատություններիհետ կապի ամրապնդմանը:

Չնայած վերջին տարիներին մանկավարժական համալսարանում զգալի աշխատանքներ են տարվել բուհի մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ, սակայն դրանցում բոլոր շահակիցների ներգրավման փորձերը մենք լիովին բավարար չենք համարում: Կան խնդիրներ՝ կապված աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրության, տարբեր կրթական ծրագրերի առարկայացանկերի, կրթական վերջնարդյունքների հստակ պլանավորման, գնահատման ընթացակարգերի, դասավանդողների ընտրության, մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտներում:

Զգալիորեն բարելավվել են բուհի կառավարման ընթացակարգերը, ինչպես նաև միջազգայնացմանն ուղղված քայլերը:

Բուհն ակտիվորեն նպատակաուղղված է գիտահետազոտական աշխատանքների ժամանակակից կառուցակարգերի մշակմանն ու ներդրմանը, սակայն այդ ուղղությամբ անելիքները դեռևս բազմաթիվ են:

Խնդիր կա վերնայելու բուհի ուսումնական ռեսուրսների՝ բազաների, կողմնորոշման, տեղեկատվության և հաղորդակցման գործընթացները:

Դեռևս կիրառվում են դասավանդման և ուսումնառության ավանդական՝ ոչ ճկուն մոտեցումներ, ուսանողամետ կրթության մարտահրավերին համակարգը դժվարանում է դիմագրավել:

Հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակը գնալով բարելավվում է, սակայն բազմաթիվ խնդիրներ դեռևս շարունակում են մնալ չլուծված, որոնք պայմանավորում են անցումային շրջանում կայուն զարգացման դժվարությունները:

Հանրապետությունը շարունակում է մնալ փաստացի սառեցված հակամարտության փուլում, որը լրացուցիչ բարդություններ և նոր պահանջներ է առաջադրում մասնագետների պատրաստմանը:

Սոցիալական բնույթի մարտահրավերների շարքում առաջնային նշանակություն է ձեռք բերում ներառական կրթության համար մասնագետների պատրաստումը և համապատասխան պրակտիկ բազաների ընտրությունը:

Պրակտիկայի կազմակերպման արդի հրամայականներ շարքում պետք է նշել հատկապես նորագույն մեթոդներին տիրապետող մեթոդական բարձր պատրաստվածությամբ, բարձր որակավորմամբ և գործնական դաշտին տիրապետող մասնագետների ներգրավումը պրակտիկայի կազմակերպման գործընթաց: Դեռևս կան անելիքներ՝ պրակտիկան՝ իբրև ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչ ընկալելու և դիտարկելու դիրքորոշումն ամրակայելու հետ կապված;

Մյուս կողմից պրակտիկայի արդյունավետությունը կախված է մասնագետների համագործակցված աշխատանքից՝ ինչպես բուհի ներսում, այնպես էլ դրանից դուրս:

Պրակտիկայի կազմակերպման արդի հրամայականներից է նաև պրակտիկաների կազմակերպման նորմատիվ-իրավական բազայի արդիականացումն ու բարելավումը, ուսանողների իրավունքների պաշտպանությունը, գործընթացների թափանցիկ կառավարումն ու վարչարարությունը, ուսանողներին պրակտիկայի ընթացքում ակադեմիական խորհրդատուների տրամադրումը:

Համաշխարհայացման և գլոբալացման գործընթացներում առաջին պլան են մղվում տեղեկատվական և հաղորդակցական նոր տեխնոլոգիաները, որոնք ակտիվորեն ներդրվում են գործունեության բոլոր ոլորտներում: Հետևաբար կարևոր է ուսումնամասնագիտական պրակտիկաների կազմակերպման և իրականացման ընթացքում հաշվի առնել այս հրամայականներն ու ձեռնարկել համարժեք քայլեր՝ գործընթացի զարգացման նպաստող ուժերի և հնարավորությունների լավագույն օգտագործման, իսկ խանգարող գործոնների ազդեցության չեզոքացման ուղղությամբ:

ՀՊՄՀ-ում պրակտիկայի կազմակերպման կառուցակարգերի բարելավման ուղղությամբ նույնպես ձեռնարկվել են բազմաթիվ միջոցառումներ՝ ուղղված մեթոդական նյութերի հրատարակմանը, առարկայական նկարագրերի մշակմանն ու փորձարկմանը, սակայն գործընթացի շարունակականությունը, ինչպես նաև հետադարձ կապի, գնահատման և վերանայման հնարավորությունը անհրաժեշտ է դիտարկել իբրև առաջնահերթություն:

2. Պրակտիկայի կազմակերպման ռազմավարության հայեցակարգը և գործիքակազմը

Կազմակերպության ռազմավարական զարգացման, դրանում տեղի ունեցող գործընթացների փոփոխության և դրանց կառավարման կառուցակարգերն արտացոլված են բազմաթիվ հետազոտություններում:

Թերևս այդ գործընթացներից կարելի է համարել նաև ուսանողների ուսումնամասնագիտական պրակտիկան, որն ամենաընդհանուր գծերով կարելի է սահմանել որպես

Նորարարական զարգացման ռազմավարության մշակման հիմնական ձևերից են գործընթացային, բազմաշերտ, կետային, կենտրոնացված, մատրիցային, ցանցային, ինտեգրացված և տարբերակված եղանակները:

Կ. Լևինի կողմից առաջարկված մոդելի համաձայն, հաջող փոփոխությունները կազմակերպության զարգացման ընթացքում պետք է անցնեն երեք փուլ.

ա/ ստատուս քվո վիճակի փոփոխություն,

բ/ շարժում դեպի նոր վիճակ,

գ/ նոր փոփոխությունների պահպանում, դրանց մշտականության ապահովում:

Առաջին փուլում անհրաժեշտ ստատուս քվոյի պահպանմանը հնարավոր է հասնել.

- Շարժիչ ուժերի ավելացում,
- Խանգարող ուժերի փոքրացում, նվազեցում,
- Երկու նախորդների զուգակցում:

Երկրորդ փուլում տեղի է ունենում առաջխաղացում, ներդրվում են փոփոխություններն ու նորարարությունները:

Երրորդ փուլում տեղի է ունենում արդեն առկա փոփոխությունների սառեցում, որն ուղղված է շարժիչ ուժերի և խանգարող ուժերի միջև հավասարակշռության պահպանմանը կամ վերականգնմանը:

Այս գործընթացի գիտական նախագծման և համապատասխան մոդելների նախագծման նպատակով հոգեբանության գիտահետազոտական լաբորա-տորիայում մշակվել են հարցարաններ և ֆոկուս խմբի կազմակերպման սցենարներ, որոնք կիրառվել են ուսումնական ռեսուրսների արդյունավետության և

հասանելիության գնահատման և ցանկալի փոփոխությունների նախագծման գործընթացում:

Այս գործընթացն իրականացվել է մի շարք փուլերով, որոնք նկարագրված են համապատասխան մեթոդական գրականության մեջ:

1. Ախտորոշում,
2. Վերլուծություն,
3. Հետադարձ կապ,
4. Գործողություն,
5. Գնահատում:

Թերևս այս փուլերի գործողությունների նկարագրման և վերլուծության համար անհրաժեշտ է ներկայացնել ռազմավարական պլանավորման ևս մեկ կարևոր մեթոդական գործիք կամ մոտեցում, որը նույնպես կարևոր դեր է կատարում ռազմավարական ծրագրի գործողությունների պլանավորման և իրականացման համար: Դա առանցքային կոպմպետենցիաների վրա հիմնված ռազմավարության կառուցումն է, որը ժամանակակից ռազմավարական կառավարման գործընթացում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում կազմակերպության;

Այս մոտեցման սահմաններում առանցքային կոմպետենցիաներըը սահմանվում են որպես կազմակերպության՝ որևէ ունիկալ, ինքնատիպության ընդունակությունը, որն ապահովում է նրա առաջնորդող դիրքը մրցակցային դաշտում: դրա համար անհրաժեշտ են հետևյալ գործողությունները.

- Կազմակերպության ինքնատիպ հատկանիշների և վերջնարդյունքների բացահայտում,
- Կազմակերպության կոլեկտիվ խմբային կարողությունների գնահատում,
- Կազմակերպության ուշադրության տեղորոշում առանցքային կոմպետենցիաների վրա, որոնք ռազմավարության հիքմն են կազմում
- Առանցքային կոմպետենցիաների անկրկնելիության, վերարտադրման բացառման ապահովում,
- Առաջնորդության ռազմավարության մշակում:

Մարդկային ռեսուրսների ռազմավարական կառավարման ժամանակակից մոտեցումների շարքում առանձնահատուկ դերակատարություն ունի այսպես կոչված «Լին ռազմավարությունը», որն ընդհանուր գծերով ուղղված է կառավարման աստիճանակարգերի թվի նվազեցմանը, պատասխանատվության բաշխմանը, հաճախորդի հանդեպ կողմնորոշման զարգացմանը և որակի ամբողջական կառավարմանը: Այս ռազմավարությունը ենթադրում է նաև հաղորդակցման հստակ կառուցակարգերի մշակում և ներդրում կազմակերպությունում, որն առավելապես

միտված է հետադարձ կապին և հորիզոնական փոխհարաբերություններին, որոնք փոխարինելու են գալիս նախկին ուղղահայաց փոխհարաբերություններին:

Դիտարկելով հիմնախնդիրը պրակտիկայի կազմակերպման ռազմավարական հայեցակարգի համատեքստում՝ մենք առաջ ենք քաշել պրակտիկայի՝ որպես ուսումնամասնագիտական գործունեության ինքնուրույն ոլորտի գաղափարը՝ որը մի կողմից հենվում է համալսարանի առանցքային կոմպետենցիաների՝ որակյալ մանկավարժական կադրերի պատրաստման կարողությունների վրա, իսկ մյուս կողմից իր հեռապատկերում ներկայացնում է ուսուցչի՝ որպես պրոֆեսիոնալիզմի բարձրագույն մակարդակի գաղափարը:

Միաժամանակ մենք կարևորում ենք մի շարք կարևոր ոլորտներում «ստատուս քվո»-ի պահպանման անհրաժեշտությունը: Դա վերաբերում է հատկապես համալսարանի մնայուն արժեքներին, որոնց տրասֆորմացիան համալսարանի վերակառուցումների ներկա փուլում պետք է հնարավորինս ընթանա առանց ավելորդ լարվածության:


Որպես պրակտիկայի կազմակերպման գործընթացի արդիականացման կարևոր նախադրյալ մենք դիտարկում ենք նաև կոմպետենցիաների աստիճանակարգային զարգացման կառուցակարգը, որը հենվում է պլանավորում իրականացում, գնահատում վերանայում, սկզբունքի վրա և ընդհանրական տեսքով համարժեքորեն արտահայտում է տարբեր կոմպետենցիաների փոխներգործությունը և հարաշարժությունը:

Ուսումնամասնագիտական պրակտիկայի՝ որպես առաջավոր նորարարական կրթափորձի ներդրման ոլորտի դիտարկման մեր գաղափարը հենվում է այն համոզմունքի վրա, որ ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գործընթացները մեծ պահանջներ են առաջադրում պրոֆեսիոնալիզմին՝ հատկապես դրա գործնական կողմին: Թեկուզև մեր կողմից դիտարկված մոդելների վերլուծությունը փաստում է, որ կազմակերպության աստիճանակարգերի նվազումը էապես մեծացնում է այն գործառույթների շրջանակը, որոնք պետք է իրականացնեն միջին և բարձր օղակի կառավարիչները:

Լին ռազմավարության կիրառման ինքնատիպ ոլորտ կարելի է համարել նաև պրակտիկայի կազմակերպման նորմատիվ-իրավական փաթեթի բարելավմանն ուղղված քայլերի պլանավորումը, որտեղ վերանշյալ ռազմավարությունը մի կողմից արտահայտվում է դիրեկտիվ հրամանագրերով առաջնորդվելուց հրաժարվելու կամ դրանք հնարավորինս նվազեցնելուն ուղղված քայլերում, իսկ մյուս կողմից գործընթացը կարգավորող փաստաթղթերի քանակի էական կրճատման, դրանց մասին բոլոր շահակիցներին /ներքին և արտաքին, որը նույնպես բխում է վերոնշյալ

ռազմավարության սկզբունքներից/ իրազեկման քաղաքականության մշակման և ներդրման ձևով:

Թերևս առաջին հայացքից կարող է թվալ, որ մի շարք դեպքերում Լին ռազմավարությունը հակասության մեջ է մտնում առանցքային կոմպետենցիաների վրա կառուցված ռազմավարության հետ: Մասնավորապես այդպես կարող է թվալ, եթե խնդիրը դիտարկենք բազմաֆունկցիոնալ գործառույթների թվաքանակի ավելացմանն ուղղված գործողությունների պլանավորման ընթացքում: Օրինակ՝ ռազմավարության մեջ մատնանշված ուսուցչի մոդելը շատ ընդհանրական կոմպետենցիաներ կարող է պարունակել, որն ըստ էության արտաքուստ չի համապատասխանում Լին ռազմավարությանը, քանի որ էապես ավելանում է ակնկալվող վերջնարդյունքների քանակը: Այս պարագայում մենք լուծումը տեսում ենք կոմպետենցիաների որակական զարգացման մեջ, որն արդեն իր մեջ կմիավորի մի շարք մետակոմպետենցիաներ և համապատասխան գործառույթներ: Նույնը կարելի է մատնանշել նոր կանոնակարգերի ստեղծման քայլերի պլանավորման մասին կամ այն դեպքերում, երբ մեր կողմից առաջարկվում է ներդնել ուսումնամասնագիտական պրակտիկայի կենտրոնացված կառավարում, որը սխալ քայլերի պարագայում կարող է կատարվել ինքնավարության նվազման հաշվին: Այս պարագայում, ինչպես տեսնում ենք, մեզ օգնության է գալիս դաշտի ուժերի վերլուծության և պլանավորման ռազմավարությունը, որտեղ որպես լրացուցիչ ռեսուրս անհրաժեշտ է ներդնել հատուկ հաղորդակցական գործընթացներ և այսպես կոչված մասնակցային կառավարման կառուցակարգեր, որոնք միտված կլինեն ուժերի հավասարակշռության վերականգնմանը և իրենց մեջ զգալի զարգացման ներուժ են պարունակում:



Ուսումնամասնագիտական պրակտիկան սովորողների ուսումնական գործողությունների համակարգ է, որն իրականացվում են մասնագիտական աշխատանքային գործունեության պայմաններում նրանց մասնագիտական կողմնորոշման, մասնագիտական հարմարման և համապատասխան կարողությունների զարգացման նպատակով:

ՀՊՄՀ-ում ուսումնամասնագիտական պրակտիկայի առաքելությունը ինտերակտիվ - նորարարական և զարգացնող կրթական միջավայրի բաղադրիչների ներդրման խթանումն է ՀՊՄՀ ուսանողների գործնական ուսումնառության գործընթացում՝ ուսանողների մասնագիտական խորհրդատվության նոր տեխնոլոգիաների և մոդելների կիրառման ճանապարհով:

Պրակտիկայի առաքելությունը նպատակաուղղված է.

ա/ կրթության և մշակույթի արդի պահանջներին համահունչ մասնագիտական փորձառության կազմակերպմանը,

բ/ համալսարանի մագիստրատուրայի ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը,

գ/ ուսանողների մասնագիտական կարողությունների և կարիերայի կողմնորոշումների զարգացմանը,

Պրակտիկայի խնդիրներն են՝

- աջակցել ՀՊՄՀ-ի և պրակտիկայի բազա հանդիսացող հիմնարկների միջև համագործակցության արդյունավետության բարձրացման գործընթացին,
- զարգացնել և մասնագիտական ուսուցման և գործունեության կապը, ապահովել պրակտիկայի կազմակերպման գործընթացում կողմնորոշիչ-տեղեկատվական և մեթոդական աջակցություն,
- իրականացնել պրակտիկայի գործընթացի պլանավորում, իրականացում և գնահատում առաջավոր փորձի ուսումնասիրության և որակի կառավարման ժամանակակից կառուցակարգերի հիման վրա,
- խթանել ինտերակտիվ - նորարարական և զարգացնող կրթական միջավայրի բաղադրիչների ներդրումը ՀՊՄՀ ուսումնական գործընթացում,
- նպաստել պրակտիկայի արդյունքների և ուսանողների ձեռքբերումներին գնահատման արդիականացմանը՝ հետադարձ կապի կառուցակարգերի ներդրման և՝ հաջողված փորձի իմաստավորման, տարածման և ինստիտուցիոնալացման ճանապարհով:

3. Ուսանողների մասնագիտական պրակտիկայի առաքելությունը և նպատակները

Ուսումնառողների պրակտիկայի սկզբունքները և գործառույթները

Ուսումնառողների պրակտիկայի կազմակերպվում է հիմք ընդունելով ստորև թվարկվող **սկզբունքները**՝

- **Մարդասիրության սկզբունքը** արտահայտվում է մարդու անհատականության և յուրատիպության մասին ապագա մանկավարժի դիրքորոշումների զարգացման անհրաժեշտության մեջ: Այն ամբողջովին արտահայտում է այն բոլոր հիմնարար սզկբունքները և հայեցակետերը, որոնք ուղենիշային հիմք են ներառական կրթության կազմակերպման համար:
- **Մանկավարժական-մասնագիտական կողմնորոշման** սկզբունքն արտահայտվում է մանկավարժական մեթոդական պատրաստվածության զարգացումներում, որը բնականաբար պետք է հենվի առարկայական իմացության վրա, սակայն առավել չափով պետք է միտված լինի մանկավարժական կոմպետենցիաների զարգացմանը:
- **Մանկավարժական ինքնաիրացման և ինքնազարգացման սկզբունքն** ենթադրում է ուսանողի կողմից պրակտիկայի ընթացքում ձեռք բերված գիտելիքների, կարողությունների և հմտությունների համար պատասխանատվության դերի բարձրացում: Միաժամանակ ուսումնառողների պրակտիկան պետք է միտված լինի մանկավարժ մասնագետի ինքնաիրացմանը, ինքնավերլուծության, ինքնաքննադատությանը և այլ ընդհանրական կոմպետենցիաների զարգացմանը:
- **Շարունակականության և ամբողջականության սկզբունք:** Այս սկզբունքն ենթադրում է պրակտիկայի կազմակերպման ընթացքում դրա բոլոր մասնակիցների՝ հոգեբանի, մանկավարժի, մեթոդիստի համագործակցություն, հիմնարկի կողմից պատասխանատու անձի /ղեկավարի/ և ուսանողի համագործակցության և թիմային աշխատանքի կարողությունների հզորացում և դրսևորում պրակտիկայի ընթացքում: Այն հենվում է նաև պրակտիկայի բոլոր տեսակների՝ որպես մեկ կրթական մոդուլի բաղկացուցիչ մասերի միասնական կազմակերպման ռազմավարության վրա: Այս սկզբունքի տեսանկյունից խիստ կարևոր է նաև

պրակտիկայի բոլոր գործառույթների իրականացումը, ինչը ենթադրում է 1-ին կուրսից սկսած պրակտիկաների կազմակերպման նոր ծրագրերի ներդրում[1]:

- **Կոմպետենտության սկզբունքը ենթադրում է** պրակտիկայի ընթացքում սովորողների այն ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաների շարունակական զարգացում, որոնք նախատեսված են կրթական ծրագրով /ԿԾ/: Կոմպետենտային սկզբունքի արդյունավետությունն ապահովվում է նաև պրակտիկայի հաշվտվությունների /թղթապանակի/ կոմպետենցիաների որակական գնահատման մեթոդաբանության ներդրմամբ:
- **Ռեֆլեքսիվության սկզբունքը** ենթադրում է ամբողջ պրակտիկայի ընթացքում սովորողների ինքնագնահատման և ինքնավերլուծության կարողությունների զարգացում, ինչպես նաև պրակտիկանտի ձեռքբերումների գնահատման՝ իբրև հետադարձ կապի մեխանիզմի գործառույթի ուժեղացում**:**
- **Տեսության և պրակտիկայի միասնության սկզբունք:** Այս սկզբունքն ենթադրում է Կրթական ծրագրում տեսական նյութի և պրակտիկայի փոխկապակցման հստակ մեխանիմզների ներդրում: Այս սկզբունքի իրացման մեխանիզմ շարունակական պրակտիկայի կազմակերպման մոդելն է:

Պրակտիկայի գործառույթները՝

- **Հարմարվողական գործառույթն** արտահայտվում է ուսումնառողների մասնագիտական հարմարման միջոցով:
- **Ուսուցանող գործառույթն** ուղղված է պրակտիկայի ընթացքում ուսումնառողների նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը, այսինքն՝ պրակտիկան հանդես է գալիս որպես մասնագիտական ուսուցման բաղադրիչ սովորողների ակտիվ ուսուցման միջոցով:
- **Զարգացնող գործառույթն** արտահայտվում է պրակտիկայի ընթացքում ուսումնառողների կոմպետենցիաների զարգացման գործընթացում:
- **Ռեֆլեքսիվ գործառույթն** արտահայտվում է պրակտիկայի ընթացքում ուսումնառողների ձեռքբերումների ինքնագնահատման և գնահատման միջոցով հետադարձ կապի ապահովման մեխանիզմներով:

[1] Այս հարցը մանրամասնորեն քննարկվել է տարբեր մասնագետների հետ, որի համար հատուկ շնորհակալություն ենք հայտնում Հ. Պետրոսյանին և Վ. Կարապետյանին:

4. Ուսումնամասնագիտական պրակտիկայի կազմակերպման ռազմավարության գործողությունների ծրագիրը և ժամանակացույցը

Նպատակ 1. Պրակտիկայի կառավարման կառուցակարգերի և նորմատիվ-իրավական ապահովման բարելավում

1. Պրակտիկայի զարգացման ռազմավարական ծրագրի մշակում ռազմավարության մշակման հայեցակարգի մեթոդաբանության հիմնավորում. ՀՊՄՀ ռազմավարության ուսումնասիրություն, գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշների, կոմպետենցիաների վերհանում, անհրաժեշտ ռեսուրսների պլանավորում,
2. ուսանողների պրակտիկայի ղեկավարների, մեթոդիստների, դեկանների, վարչության աշխատակազմի կարիքների ուսումնասիրություն, պրակտիկայի կազմակերպմանն առնչվող փաստաթղթերի /համալսարանի նպատակի, առաքելության, մնայուն արժեքների/ ուսումնասիրություն և հիմնական խնդիրների /օրինակ պրակտիկայի՝ ուսումնական պլաններում առկա տեսակների ստանդարտացում, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն, ժամանակացույցերի բացակայություն և այլն/ վերհանում,
3. համագործակցության և լուսաբանման, իրազեկման քաղաքականության և ընթացակարգերի մշակում,

Նպատակ 2. Պրակտիկայի կազմակերպման նորմատիվ-իրավական փաստաթղթերի բարելավում,

5. Բակալավրի ուսումնամասնագիտական պրակտիկայի կանոնակարգի մշակում /պրակտիկայի տեսակները, պատասխանատուները, գնահատումը, բազաները, ժամանակացույցը/. հավելվածներ՝ պայմանագրի ձևեր, հրամաններ, բացառություններ և հատուկ հրամաններով կարգավորվող հարաբերություններ /ծավալ և ծանրաբեռնվածություն/ գնահատման ձևաչափ, պրակտիկային առնչվող այլ փաստաթղթեր,
6. Մագիստրոսի ուսումնամասնագիտական պրակտիկայի կանոնակարգի մշակում /պրակտիկայի տեսակները, պատասխանատուները, գնահատումը, բազաները, ժամանակացույցը/. հավելվածներ՝ պայմանագրի ձևեր, հրամաններ, բացառություններ և հատուկ հրամաններով կարգավորվող հարաբերություններ /ծավալ և ծանրաբեռնվածություն/ գնահատման ձևաչափ,

առնչվող այլ փաստաթղթեր, չափակարգեր և այլն/, Պրակտիկայի վարչության կանոնակարգի մշակում և հաստատում /հավելված վարչության կառուցվածքը և հաստիքակազմը/

Նպատակ 3. Պրակտիկայի կազմակերպման ենթակառուցվածքների և գործունեության բարելավում

7. Պրակտիկայի ղեկավարման կառույցի և ֆակուլտետների պրակտիկայի կադրային ապահովման կառուցակարգերի մշակում:
8. Պրակտիկայի բազաների գործառույթների ճշգրտում՝ պատասխանատուների կարողությունների զարգացում,
9. Մեթոդիկաների ամբիոնների և պրակտիկայի բազաների համագործակցության գործընթացի բարելավում:

Նպատակ 4. Պրակտիկայի մեթոդական ապահովման գործընթացի բարելավում

10. Մանկավարժության բակալավրի և մագիստրոսի պրակտիկայի կրթական ծրագրերի և առարկայական նկարագրերի մշակում, հաստատում,
11. Ուսումնամեթոդական նյութերի և ուղեցույցերի մշակում, հրապարակում,
12. Պրակտիկայի մեթոդիստների և խորհրդատուների կարողությունների զարգացում,
13. Մանկավարժական պրակտիկայի մոդելի ստեղծում հեռակա /հեռավար/ ուսուցման համակարգում:

Նպատակ 6. Պրակտիկայի և մեթոդիկաների ամբիոնների գործունեության միասնականության և փոխլրացման կառուցակարգերի մշակում և ներդրում

14. Առարկայական մեթոդիկաների և պրակտիկաների կապի ուսումնասիրություն և ամրապնդում /մանկավարժական մասնագիտությունների գծով/
15. Առարկայական մեթոդիկաների ծրագրերի, և այլ ուսումնական ռեսուրսների բարելավում,

16. Ոչ մանկավարժական մասնագիտությունների գծով պրակտիկաների կազմակերպման մեթոդական ապահովման կառուցակարգերի ներդրում:

Նպատակ 7. Բուհ-պրակտիկայի հիմնարկներ համագործակցության կառուցակարգերի և գործընթացների բարելավում

17. Դպրոց-բուհ կապի ամրապնդման կառուցակարգերի արդիականացում /կարիքների վերլուծություն, փորձնական պրակտիկաների կազմակերպում, բազային դպրոցի /դպրոցների/ զարգացման ռազմավարության մշակման աջակցություն/,
18. ՄԶԴ-ների հիմնադրում և դրանց գործունեության ծրագրի մշակում,
19. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ պրակտիկայի կազմակերպման նոր համագործակցության հաստատում:

Նպատակ 7. Մագիստրատուրայի հետազոտական և մանկավարժահետազոտական պրակտիկաների միասնականության մեխանիզմների մշակում և ներդրում

20. Մագիստրոսի կրթական ծրագրով նախատեսվող մանկավարժական պրակտիկայի հստակեցում՝
21. Մագիստրոսի հետազոտական աշխատանքի պահանջների, չափանիշների հստակեցում և մագիստրոսի հետազոտական և մանկավարժահետազոտական պրակտիկաների բովանդակային չափորոշիչների համապատասխանեցում[2],

Նպատակ 8. Պրակտիկայի համակարգման և արդյունքների գնահատման կառուցակարգերի բարելավում

22. Պրակտիկայի համակարգման էլեկտորանային ռեսուրսների ներդրում,
23. Պրակտիկայի թղթապանակի՝ որպես պրակտիկայի արդյունքների գնահատման կառուցակարգերի մշակում և ներդնում,

[2] Մագիստրատուրայի և որակավորման բարձրացման վարչության հետ համատեղ:


24. Պրակտիկայի թղթապանակի՝ իբրև ուսանողի ամփոփիչ ատեստավորման փաստաթղթի ընթացակարգերի մշակում, ներդրում և հաստատում:
25. Պրակտիկաների կազմակերպման, մասնագիտական կողմնորոշման ռեսուրսների բարելավում;
26. Գործատուների կողմից պրակտիկայի արդյունքների գնահատման կառուցակարգերի բարելավում;


Նպատակ 9. Պրակտիկաների կազմակերպման տեխնոլոգիական ռեսուրսների զարգացում

27. Տեխնոլոգիական ռեսուրսների զարգացման համապատասխան իրավական-նորմատիվ փաստաթղթերի վերանայում և բարելավում:
28. ՏՀ տեխնոլոգիաների և նորարական գործունեություն իրականացնող պրակտիկայի բազաների հետ համագործակցության հաստատում:
29. Արտադրական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի հետ պրակտիկայի շուրջ համագործակցության հաստատում

Նպատակ 10. Պրակտիկայի գործընթացի գնահատման և վերահսկման բարելավման կառուցակարգերի մշակում և ներդրում

30. Գործատուների բավարարվածության և պրակտիկայի վերաբերյալ առաջարկների մշտադիտարկում
31. Ֆակուլտետների դեկանների հետ համատեղ պրակտիկայի իրականացման և գնահատման արդյունավետության ուսումնասիրությանկառուցակարգերի մշակում և ներդնում:
32. Պրակտիկայի միջազգայնացման, գործընթացի բարելավման արտաքին ռեսուրսների ներգրավման /աուտսորսինգի/ կառուցակարգերի մշակում:
33. Պրակտիկայի գործընթացի մարդկային ռեսուրսների բարելավման կառուցակարգերի մշակում և ներդնում:


Գործողություն
Վերջնաժամկետ
11.03.13
18.03.13
25.03.13
01.04.13
08.04.13
15.04.13
22.04.13
13.05.13
20.05.13
27.05.13
03.06.13
10.06.13
17.06.13
24.06.13
01.07.13
08.07.13
15.07.13
26.08.13
02.09.13
09.09.13
16.09.13
23.09.13
30.09.13
07.10.13
14.10.13
21.10.13
28.10.13
04.11.13
11.11.13
18.11.13
25.11.13
02.12.13
09.12.13
16.12.13
23.12.13
03.2014
04.2014
05.2014
06.14
07.14
09.14
10.14
11.14
12.14
03.15
04.15
05.2015
06.2015
07.2015
09.2015
10.2015
11.2015
12.2015
1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16


11.03.13
18.03.13
25.03.13
01.04.13
08.04.13
15.04.13
22.04.13
13.05.13
20.05.13
27.05.13
03.06.13
10.06.13
17.06.13
24.06.13
01.07.13
08.07.13
15.07.13
26.08.13
02.09.13
09.09.13
16.09.13
23.09.13
30.09.13
07.10.13
14.10.13
21.10.13
28.10.13
04.11.13
11.11.13
18.11.13
25.11.13
02.12.13
09.12.13
16.12.13
23.12.13
03.2014
04.2014
05.2014
06.14
07.14
09.14
10.14
11.14
12.14
03.15
04.15
05.2015
06.2015
07.2015
09.2015
10.2015
11.2015
12.2015
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
30
31
32
33